ArmLur.am

ISSN 1829-2763

ՕՐԱԹԵՐԹ ԲՈԼՈՐԻ ԵՎ ԱՄԵՆ ԻՆՉԻ ՄԱՍԻՆ

Ժողովուրդ

12 հոկտեմբերի չորեքշաբթի 2022
տպագրության ԺԱ տարի

144
(2624)

100 դրամ

քաղ. Երեւան, Աբովյան 22ա/3 (0010) + 374 10 546423 info.armlur@gmail.com, info.zhoghovurd@gmail.com

ՆԻԿՈԼ ՓԱՇԻՆՅԱՆԸ ԽԱԲԵԼ Է. ՄԱՍ 110

Հոկտեմբերի 5-ին խորհրդարանում կառավարություն-ԱԺ հարցուպատասխանի ժամանակ ՀՀ վարչապետ Նիկոլ Փաշինյանը հանդես է եկել բազմաթիվ իրարամերժ հայտարարություններով եւ հայտնել նաեւ այնպիսի տեղեկություններ, որոնք իրականությանը չեն համապատասխանում: Իր ելույթում Նիկոլ Փաշինյանը կապիտուլյացիայի համար մեղադրում է Սերժ Սարգսյանին. «Կրկին անգամ ասում եմ, որ մեզ ուղղված բոլոր, առանց բացառության բոլոր մեղադրանքների հասցեատերերը իրենք են, իրենք՝ սկսած Ղարաբաղը Ադրբեջանի կազմում ճանաչելու մեղադրանքից, վերջացրած կապիտուլյացիայի մեղադրանքից: Որովհետեւ էն թուղթը, որը սեղանին թողել է Սերժ Սարգսյանը, բանակցային էն թուղթը որ թողել է, եթե այդ չափանիշներով եւ այդ բանաձեւերով գնահատենք, դա եղել է կապիտուլյացիայի թուղթ: Սերժ Սարգսյանը սեղանին թողել է կապիտուլյացիայի թուղթը եւ հեռացել է: Եկեք սա արձանագրենք»: Նախորդ տարվա արտահերթ խորհրդարանական ընտրությունների քարոզարշավի ընթացքում Սերժ Սարգսյանը հրապարակեց մի ձայնագրություն, որտեղ Նիկոլ Փաշինյանը փակ հանդիպման ընթացքում իր թիմակիցներին պատմում էր իր՝ վարչապետ ընտրվելուց ընդամենը 4 օր հետո Սոչիում՝ սուրճի սեղանի շուրջ տեղի ունեցած մի զրույցից: Ձայնագրության մեջ Նիկոլ Փաշինյանը պատմում է, որ Պուտինը, Նազարբաեւն ու Լուկաշենկոն հորդորել են իրեն օգտվելով ժողովրդական մեծ վստահությունից լուծել ղարաբաղյան հարցը, եւ շեշտել. «Ադրբեջանի նախագահ Ալիեւը հասկանում է, որ Ղարաբաղը երբեք Ադրբեջանի կազմում չի լինի»: Ըստ այս հրապարակման՝ Նիկոլ Փաշինյանն ինքն է փաստում, որ, ըստ ԱՊՀ երկրների որոշ ղեկավարների, բանակցությունները հասել էին այնպիսի փուլի, երբ «Ղարաբաղը երբեք չէր լինելու Ադրբեջանի կազմում»: Այսպիսով, փաստենք, որ նա հերթական անգամ խաբել է ՀՀ հպարտ եւ արժանապատիվ քաղաքացիներին:

Ազգային ժողովի նախագահ Ալեն Սիմոնյանի գլխավորած պատվիրակությունը Ռուսաստանի Դաշնության Պետական Դումայի նախագահ Վյաչեսլավ Վոլոդինի հրավերով Մոսկվայում է: ՀՀ ԱԺ պատվիրակությունը ոչ միայն Վոլոդինի, այլեւ Դաշնության Խորհրդի նախագահ Վալենտինա Մատվիենկոյի ու ՌԴ խորհրդարանում ներկայացված Единая Россия խմբակցության ներկայացուցիչների հետ է հանդիպել: Երեկ՝ հոկտեմբերի 11-ին, տելեգրամյան ալիքներով լուր էր տարածվում, որ ՀՀ պատվիրակությանն ու մասնավորապես ԱԺ նախագահ Ալեն Սիմոնյանին թե՛ Վոլոդինը, թե՛ Մատվիենկոն հստակ հարց են ուղղել՝ պարզաբանել՝ ՀՀ-ն արդյոք պատրաստվում է հրաժեշտ տալ ՀԱՊԿ-ին կամ, այսպես ասած, առ ոչինչ ճանաչել ՀՀ-ՌԴ ռազմավարական գործընկերությունը՝ փոխելով աշխարհաքաղաքական վեկտորը: Այս տեղեկությունը ճշտելու համար «Ժողովուրդ» օրաթերթը դիմեց ԱԺ նախագահի մամուլի քարտուղար Ծովինար Խաչատրյանին: Ի պատասխան՝ նա նշեց, որ նման բան չի եղել: Տրամաբանությունը հուշում է, որ ՌԴ այցելած հայկական պատվիրակության անդամներին ռուսաստանցի գործընկերները առաջին հերթին քաղաքական վեկտորը փոխելու կամ նման մտադրություն ունենալու մասին հարցեր պետք է ուղղեին: Դրա մասին է վկայում նաեւ ՌԴ արտաքին գործերի նախարարության պաշտոնական ներկայացուցիչ Մարիա Զախարովայի՝ երեկ արտահայտած միտքն այն մասին, որ Մոսկվան ԵՄ առաքելությունը դիտարկում է որպես Երեւանի եւ Բաքվի հարաբերությունների կարգավորմանը միջամտելու փորձ:

«Ժողովուրդ» օրաթերթը իր լավատեղյակ աղբյուրներից տեղեկացավ, որ ԱԱԾ նախկին տնօրեն Գեորգի Կուտոյանի, ՀՀ նախկին ոստիկանապետ Հայկ Հարությունյանի ինքնասպանությունների դեպքերով հարուցված քրեական վարույթներով քննությունները վերսկսվել են: Իսկ ի՞նչն է պատճառը, որ նախաքննական մարմինը որոշել է նորից քննել տարիներ առաջ տեղի ունեցած սպանությունների գործերը: Ինչպես հայտնի է, նախկինում քննիչները չբացահայտված քրեական գործերը կասեցնում էին. հիմա ամեն ինչ այլ է: ՀՀ քրեական դատավարության նոր օրենսգիրքը հստակ սահմանում է, որ կամ քրեական վարույթը կարճվում է, կամ որեւէ մեկի նկատմամբ քրեական հետապնդում է հարուցվում եւ մեղադրական եզրակացությամբ դատարան է ուղարկվում: Այսինքն՝ ՀՀ քրեական դատավարության օրենսգիրքը այլեւս չբացահայտված քրեական վարույթների կասեցման իրավական ընթացակարգ չի նախատեսում: Եթե նախկինում քննիչները քրեական գործերը կասեցնում էին ու գցում տարիներով իրենց «սեյֆերում», ապա հիմա պետք է քննությունը շարունակեն: Հիշեցնենք, որ 2020 թվականի հունվարի 12-ին ինքնասպան եղավ ԱԱԾ նախկին տնօրեն Գեորգի Կուտոյանը, ինչի փաստի առթիվ հարուցվեց քրեական վարույթ: Մեկ տարի անց՝ 2021 թվականին, Քննչական կոմիտեի հատկապես կարեւոր գործերի քննության գլխավոր վարչությունում Ազգային անվտանգության ծառայության (ԱԱԾ) նախկին տնօրեն Գեորգի Կուտոյանի մահվան դեպքի առթիվ հարուցված քրեական գործի նախաքննությունը կասեցվեց: 2019 թվականի սեպտեմբերի 24-ին ինքնասպան եղավ ՀՀ նախկին ոստիկանապետ, «Մարտի 1»-ի գործով մեղադրյալ Հայկ Հարությունյանը, ինչի առթիվ կրկին հարուցվեց քրեական գործ եւ դեպքից երկու տարի անց կասեցվեց: Հիմա պետք է որոշեն՝ կամ կա մեղադրյալ այս գործերով, կամ ոչ:

«Ժողովուրդ» օրաթերթի տեղեկությունների համաձայն՝ մոտ մեկ ամիս առաջ Երեւանի Կենտրոն վարչական շրջանի ղեկավարին եւ տեղակալներին հենց աշխատասենյակում ծեծի են ենթարկել: Պատմությունը կապված է Երեւանի Կենտրոնում գտնվող խաղահրապարակի հետ. բնակիչները երկար ժամանակ դիմել են Կենտրոն վարչական շրջանի ղեկավարին, տեղակալներին՝ խնդրելով բարեկարգել իրենց բակի տարածքը, սակայն ոչինչ չի արվել: Մոտ մեկ ամիս առաջ Երեւանի կենտրոնի մի քանի բնակիչներ գնացել են թաղապետարան՝ պարզաբանումներ ստանալու: Խոսակցությունը փոխթաղապետ Ռոմանոս Սաֆարյանի սենյակում է ծավալվել ու չի ստացվել, քանի որ փոխթաղապետը օգտագործել է պաշտոնյային ոչ հարիր բառապաշար՝ «սպրո՞ս եք անում» հարցադրումով: Երեւանի բնակիչներն էլ, որոնցից մեկը քրեական աստիճանակարգով բարձրագույն կոչում է ունեցել, բացատրել է, որ իրենք այդ նպատակով չեն եկել: Այսպես, փոխթաղապետ Ռոմանոս Սաֆարյանի հետ քաշքշուկ է եղել, քարտուղարուհին շտապ կանչել է մյուս փոխթաղապետին՝ Նիկոլայ Սարիբեկյանին: Այնուհետեւ սենյակ է եկել թաղապետ Սամվել Ղուկասյանը, որոնք բոլորն էլ հասցրել են հարվածներ ստանալ հենց աշխատասենյակում: Ծեծկրտուքից հետո բնակիչները դուրս են եկել շենքից, իսկ թաղապետ Ղուկասյանը դիմել է ինչպես Երեւանի քաղաքապետ Հրաչյա Սարգսյանին, այնպես էլ փոխքաղաքապետ Տիգրան Ավինյանին: Քրեական ենթամշակույթը խիստ մերժող Նիկոլ Փաշինյանի իշխանության համայնքային ներկայացուցիչները խնդիրը ոչ թե լուծել են իրավապահների միջոցով, այլ «օրենքով գողերի» օգնությանն են դիմել: Երեկ «Ժողովուրդ» օրաթերթը կատարվածի առնչությամբ զանգահարեց Կենտրոն վարչական շրջան՝ խնդրելով տալ այն փոխթաղապետի հեռախոսահամարը, որի աշխատասենյակում ծեծկրտուք է եղել: Աշխատակցուհին միանգամից փոխանցեց Ռոմանոս Սաֆարյանի հեռախոսահամարը, սակայն ո՛չ նա, ո՛չ մյուս փոխթաղապետը կամ Կենտրոն վարչական շրջանի ղեկավար Սամվել Ղուկասյանը չմեկնաբանեցին կատարվածը: Զրուցեցինք Տիգրան Մարտիրոսյանի հետ, որը կոմունալ բաժնի պետն է: Վերջինս ասաց. «Դուք սխալ ինֆորմացիա ունեք: Եթե նմանատիպ բան լիներ, միանշանակ ոստիկանություն կհրավիրվեր»: Թաղապետարանի ծեծից հետո «օրենքով գողերի» օգնությանը դիմելու մասով լուրը, բնականաբար, հերքեց նաեւ Տիգրան Ավինյանը, սակայն թաղապետարանի աշխատակիցները պատմում են ծեծի մանրամասները:

ՀԱՄԱԼՍԱՐԱՆՆԵՐ

7–8 ՏԱՐԻ ԱՆՑ՝ ՎԱՏԱԳՈՒՅՆ ՆԱԽԱԳԻԾ

«Բարձրագույն կրթության եւ գիտության մասին» օրենքի նոր նախագծի եւ այլ խնդրահարույց հարցերի շուրջ ArmLur.am-ը զրուցել է ԿԳՄՍ նախկին փոխնախարար Գրիշա Թամրազյանի հետ:

-Պարոն Թամրազյան, օրերս ԿԳՄՍ նախարարությունը e-draft հարթակում հրապարակեց «Բարձրագույն կրթության եւ գիտության մասին» օրենքի նոր նախագիծը: Արդյոք Դուք ծանոթացե՞լ եք նախագծին եւ ի՞նչ կարծիք ունեք:

-Այո, օրենքի նախագծի այս տարբերակին ծանոթացել եմ: Պետք է նշեմ, որ «Բարձրագույն կրթության եւ գիտության մասին» օրենքը քննարկվում է արդեն 7-8 տարի, եւ այդ ընթացքում պատրաստվել են օրենքի նախագծի բազմաթիվ տարբերակներ, որոնցից այս մեկը՝ վերջինը, վատագույնն է:

-Կհիմնավորե՞ք:

-Օրենքում բազմաթիվ են իրար հակասող դրույթները եւ տեխնիկական խնդիրները, որոնց չեմ ուզում անդրադառնալ, իսկ ժամկետներում այնպիսի խառնաշփոթ է ստեղծված, եւ այնպիսի անիրատեսական ժամկետներ են սահմանված, որ օրենքի դրույթների իրագործումը դնում է լուրջ հարցականի տակ:

Այնուամենայնիվ, սկսեմ ամենակարեւորից՝ բուհերի ինքնավարության բազմաչարչար հարցից: Բուհի ինքնավարությունը ոչ միայն համընդհանուր նորմ է ներկայիս աշխարհում եւ անշրջելի գործընթաց, այլեւ ՀՀ Սահմանադրության դրույթ:

Չի կարելի օրենքի հիմնավորումը սկսել բուհերի ինքնավարության մեծացման անհրաժեշտությունից եւ օրենքի մի ամբողջ հոդված (հոդված 6) նվիրել ինքնավարությանը՝ սահմանելով բուհի գործունեության հիմնական ոլորտներում ինքնավարության պահանջները, միեւնույն ժամանակ օրենքի մի շարք այլ հոդվածներով սահմանափակել հատկապես հանրային (պետական) բուհերի առանց այն էլ խոցելի ինքնավարությունը: Մասնավորապես, եթե հիշում եք, 2021 թ. Սահմանադրական դատարանը հակասահմանադրական ճանաչեց օրենքի այն կետը, որով լիազոր մարմնի ղեկավարը ռեկտորին նշանակում էր իր հայեցողությամբ: Ըստ էության, այս կետը պահպանվել է նաեւ օրենքի նոր նախագծում, որտեղ ասվում է, որ լիազոր մարմնի ղեկավարը խոշորացված 8 բուհում 5 տարի ժամկետով ժամանակավոր նշանակում է եւ՛ ռեկտորին, եւ՛ ձեւավորում է կառավարման խորհուրդը, եւ՛ նշանակում խորհրդի նախագահին, առանց հենց նույն օրենքով ռեկտորի ընտրության ու խորհրդի ձեւավորման ընթացակարգերի կամ ռեկտորի նպատմամբ սահմանված պահանջների պահպանման: Օրինակ՝ ժամանակվոր ռեկտորին խորհուրդը չի կարող անվստահություն հայտնել:

Կարծում եմ, որ ավելի ազնիվ եւ ճիշտ կլինի օրենքից հանել բուհերի ինքավարության եւ ակադեմիական ազատությունների մասին դրույթները եւ վերադառնալ մինչեւ 2005 թ.-ի իրողությանը, երբ նախարարն էր նշանակում պետական բուհերի ռեկտորներին:

-Իսկ ակադեմիական հանրությունն ինչո՞ւ է լռում:

-Գիտեք այս օրենքի նախագծի այնքան տարբերակներ հրապարակվեցին, քննարկվեցին, արտահայտվեցին հիմնավոր կարծիքներ, տրվեցին գրավոր առաջարկություններ, որոնք շատ դեպքերում հաշվի չառնվեցին, որ հանրությունը եւ, մասնավորապես, ակադեմիական համայնքը կարծես հետաքրքրությունը կորցրել է դրա նկատմամբ եւ արդեն լուրջ էլ չի վերաբերվում:

Ավելին, ակադեմիական հանրույթը վերջերս կրթության առնչվող հարցերին ծանոթանում է բացառապես համացանցից: Օրենքի նախագծի այս տարբերակում, որտեղ կան բազմաթիվ նոր կարգավորումներ, օրինակ՝ կապված նախահավատարմագրման գործընթացի, ինտեգրված ծրագրերի եւ այլ դրույթների հետ, չի քննարկվել ռեկտորների հետ, թեեւ, իմ խորը համոզմամբ, բարձրագույն կրթության օրենքի առաջին շահառուն բուհն է, իսկ օրենքն իրացնողը բարձրագույն կրթության պատասխանատուները: Ինչպե՞ս կարելի է օրենքի նախագիծը հրապարակել, առանց հիմնական շահառուների հետ շահագրգիռ քննարկումներ անցկացնելու: Նույնիսկ հասարակական խորհրդի հետ քննարկում անցկացրել են նախագիծը հրապարակելուց հետո, իսկ ռեկտորների հետ այս տարբերակը ընդհանրապես չի քննարկվել: Արդյունքում հրապարակվել է մասնագիտական, իրավական, ժամկետային, տեխնիկական խնդիրներով տարբերակ:

-Պարոն Թամրազյան, այնուամենայնիվ, երբ Դուք ԿԳՄՄՆ փոխնախարարն էիք, օրենքի այլ տարբերակներ եւս քննարկվում էին, ինչո՞ւ դրանք չընդունվեցին:

-2020 թ. մենք երկար աշխատեցինք օրենքի վրա եւ, բուհերի, շահագրգիռ այլ կողմերի հետ արդյունավետ քննարկումների, ստացված առաջարկությունների հիման վրա, պատրաստեցինք գրեթե բոլորի համար ընդունելի նախագիծ, որն ուներ մի շարք առաջադիմական դրույթներ: Իհարկե, Գիտությունների ազգային ակադեմիայի ղեկավար կազմը համաձայն չէր, քանի որ կորցնում էր վերահսկողությունը իրեն ենթակա գիտահետազոտական ինստիտուտների նկատմամբ, իսկ բուհերը դառնում էին հետազոտական կենտրոններ՝ կրթության եւ գիտության ինտեգրման համատեքստում:

-Պարոն Թամրազյան, ի՞նչ կարծիք ունեք բուհերի խոշորացման մասին:

-Ընդհանուր առմամբ գտնում եմ, որ բուհերի խոշորացում անհրաժեշտ է, սակայն նախ անհրաժեշտ է մշակել միավորման հստակ սկզբունքներ եւ միավորվող բուհերի յուրաքանչյուր դեպքի համար առանձին ծրագիր: Գործընթացը պետք է բաց, թափանցիկ քննարկվի լայն հասարակության հետ, քանի որ այս հարցը, կարելի է ասել, վերաբերում է բոլորին:

Զրուցեց ԼԻԴԱ ԵՂԻԱԶԱՐՅԱՆԸ

ԿՔՆՆԱՐԿԵՆ

«Եվրամիության անդամ երկրների դեսպանները երեկ՝ հոկտեմբերի 11-ին, ակնկալվում է, որ կհանդիպեն Բրյուսելում, կքննարկեն ու որոշում կկայացնեն Հայաստան ուղարկվելիք քաղաքացիական առաքելության վերաբերյալ»,- Եվրախորհրդարանում դեռ երեկ Հարավային Կովկասում Եվրամիության հատուկ ներկայացուցիչ Տոյվո Կլաարն է հայտնել:

Առաքելությունը, նշենք, Ադրբեջանի հետ սահմանին դիտորդներ տեղակայել է նշանակում, որ կամրապնդի երկուստեք վստահությունն ու կնպաստի դելիմիտացիայի իրականացմանը:

Նշենք, որ Հայաստան քաղաքացիական առաքելություն ուղարկելու մասին պայմանավորվածությունը ձեռք է բերվել անցած շաբաթ Պրահայում՝ Հայաստանի, Ադրբեջանի, Ֆրանսիայի ու Եվրոպական խորհրդի ղեկավարների՝ ժամեր շարունակված բանակցություններից հետո:

Քառակողմ հայտարարության համաձայն՝ Հայաստանը համաձայնել է Եվրամիության քաղաքացիական առաքելություն տեղակայել Ադրբեջանի հետ սահմանի երկայնքով: Բաքուն, որ մինչ այդ մերժել էր տեղում եվրոպական զինված ուժեր տեղակայելու առաջարկը, այժմ խոստացել է համագործակցել անզեն առաքելության դեպքում:

ԵԿԵԼ ԵՆ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅԱՆ

Հայաստանն ու Ադրբեջանը համաձայնության են եկել խաղաղության պայմանագրի հիմնական կետերի շուրջ, մնացել է դրանք կյանքի կոչել: Այս մասին հայտարարել է Թուրքիայի ԱԳ նախարար Մեւլյութ Չավուշօղուն: Բացի այդ, նա ավելացրել է, որ Հայաստան-Թուրքիա եւ Հայաստան-Ադրբեջան հարաբերությունների կարգավորումը չի կարելի առանձին դիտարկել:

«Ըստ սկզբունքային կետերի (դրանք հինգն են)՝ ձեռք է բերվել պայմանավորվածություն: Այստեղ են մտնում միմյանց տարածքային ամբողջականության ճանաչումը, սահմանազատումը եւ այլն: Մնում է միայն իրականացնել դրանք»,- ասել է Չավուշօղլուն Tvnet հեռուստալիքի հարցազրույցում:

Նրա խոսքով՝ Երեւանի հետ Անկարայի հարաբերությունների կարգավորման գործընթացը եւ Բաքվի ու Երեւանի բանակցությունները՝ խաղաղության պայմանագրի վերաբերյալ, չեն կարող միմյանցից անկախ ընթանալ:

Հիշեցնենք, որ Եվրամիության խորհրդի նախագահ Շառլ Միշելի, Ֆրանսիայի նախագահ Էմանյուել Մակրոնի, Հայաստանի վարչապետ Նիկոլ Փաշինյանի եւ Ադրբեջանի նախագահ Իլհամ Ալիեւի հանդիպումները Չեխիայի մայրաքաղաքում կայացան Եվրոպական քաղաքական համայնքի գագաթնաժողովի շրջանակում:

ՄԵՂԱԴՐՅԱԼ

ԱՋԱՏՈՒԹՅՈՒՆ՝ ԳՐԱՎԻ ԴԻՄԱՑ

Նիկոլ Փաշինյանի իշխանության ժամանակ «Ազգային հերոսի» կոչման արժանացած Անդրանիկ Փիլոյանը երեկ ազատ է արձակվել: Փիլոյանը պետբյուջե մոտ 37 հազար դոլար է վճարել ու ազատության մեջ հայտնվել: Նշենք, որ նա մեղադրվում է խոշոր չափերի կաշառք ստանալու համար:

Այս ամբողջ պատմության մեջ ուշագրավը ոչ թե այն է, որ Փիլոյանը, ըստ մեղադրանքի, խոշոր չափի կաշառք է վերցնել ու այժմ էլ խոշոր չափի գրավով ազատ է արձակվել, այլ այն, որ քրեական գործով անցնում է մի մարդ, ումից հասարակությանը, որպես ազգային հերոսի, պետք է օրինակ վերցներ:

Արտակարգ իրավիճակների նախարար Անդրանիկ Փիլոյանը ՀՀ ԶՈՒ գեներալ-մայորի, Հայաստանի ազգային հերոսի կոչումն անձամբ վարչապետ Նիկոլ Փաշինյանից է ստացել, հենց նրա իշխանության օրոք էլ կալանավորվել է:

Ի դեպ, Փիլոյանին գրավով ազատ արձակելու որոշում է կայացրել Հակակոռուպցիոն դատարանի դատավոր Տիգրան Դավթյանը: Փաստորեն, ուրույն ձեռագիր է՝ մարդուն մեղադրել «կոռուպցիոն սկանդալի» մեջ, այնուհետեւ Հակակոռուպցիոն դատարանով հենց փող վերցնել ու փոխել խափանման միջոցը:

Փաշինյանի իշխանության ժամանակ Ազգային հերոսի կոչում ստացածների մեջ է նաեւ Զինված ուժերի գլխավոր շտաբի պետի նախկին տեղակալ Տիրան Խաչատրյանը: Նա, ի դեպ, լրատվամիջոցների հետ զրույցում չի բացառել, որ օրվա՝ իրեն «հերոսացրած» իշխանությունը վաղը, մյուս օրը իր անձի նկատմամբ նույնպես կարող է հաշվեհարդար տեսնել:

Իհարկե, Նիկոլ Փաշինյանի իշխանությունը յուրայիններին հերոսացնելու (բառիս բուն իմաստով), այնուհետեւ հերոսից հակահերոս կերտելու հարցում անգերազանցելի է: Մանվել Գրիգորյանի դեպքը հիշենք, թե ինչպես 2018-ի քաղաքական վերադասավորումների օրերին նա սեղմեց Փաշինյանի իշխանության ձեռքը, ու ինչպես հեղափոխականները վարվեցին նրա հետ:

ՍԵՎԱԿ ՎԱՐԴՈՒՄՅԱՆ

ԵՄ-Ի ՋԱՆՔԵՐԸ

«Մոսկվան տեսնում է Եվրոպական Միության հերթական փորձերը՝ ամեն գնով միջամտելու Հայաստանի եւ Ադրբեջանի միջեւ հարաբերությունների կարգավորման գործընթացին, դուրս մղելու Ռուսաստանին»,- ամենշաբաթյա ճեպազրույցի ժամանակ հայտարարել է ՌԴ ԱԳՆ պաշտոնական ներկայացուցիչ Մարիա Զախարովան:

Նրա խոսքով՝ Եվրոպական Միությունը դեռեւս պաշտոնապես որոշում չի կայացրել Հայաստանի եւ Ադրբեջանի սահմանին հումանիտար առաքելություն տեղակայելու վերաբերյալ:

«Բաքվի ու Երեւանի հաշտեցման, տարածաշրջանում ամուր խաղաղության, երկարաժամկետ կայունության հաստատման միակ բանալին Ռուսաստանի, Հայաստանի եւ Ադրբեջանի ղեկավարների եռակողմ հայտարարությունների ամբողջական կյանքի կոչումն է»,- նշել է Զախարովան, հավելել՝ Մոսկվան պարբերական շփումներ է պահպանում Հայաստանի եւ Ադրբեջանի իշխանությունների հետ:

Դիվանագետի խոսքով՝ այդ առումով կօգտագործվի նաեւ Աստանայում ԱՊՀ արտգործնախարարների առաջիկա նիստի հնարավորությունը:

12-ԻՑ 11-Ը ՇՏԿՎԵԼ ԵՆ

«Փեթակ» առեւտրի կենտրոնի ճակատագիրն առաջիկայում հայտնի կլինի: ArmLur.am-ը տեղեկացավ, որ ՀՀ քաղաքաշինության, տեխնիկական եւ հրդեհային անվտանգության տեսչական մարմնի մասնագետներն այս ընթացքում ստուգում են՝ արդյոք առեւտրի կենտրոնը նախկինում հայտնաբերված թերությունները շտկել է, թե ոչ: Տեղեկացնենք, որ 2021 թվականի հունիսի 14-18-ը ստուգում էր իրականացվել «Փեթակ»-ում, եւ դրա արդյունքում հայտնաբերվել էին հրդեհային անվտանգության կանոնների 12 խախտումներ:

Մեզ հայտնի դարձավ, որ «Փեթակ» առեւտրի կենտրոնի տնօրենը նախորդ ուրբաթ գրություն է ուղարկել տեսչական մարմնի ղեկավարին եւ տեղեկացրել, որ հայտնաբերված 12 խախտումներից 11-ը շտկվել են, իսկ 12-րդը՝ ընթացիկ աշխատանքային փուլում է: Եթե տեսչական մարմինը հաստատի, որ շտկվել են խախտումները, ապա առեւտրի կենտրոնի գործունեության դադարեցման մասին որոշումը կհանվի:Առեւտրի կենտրոնի փոխտնօրեն Նորիկ Հեբոյանը ArmLur.am-ին փոխանցեց, որ հրդեհային անվտանգության կանոնների արձանագրված 12 խախտումներից 11-ը վերացվել են. «Մնացել է միայն օդափոխման սարք տեղադրել, որը պատվիրել ենք, շուտով մեզ կհասնի»:

Թե երբ սարքը տեղ կհասնի եւ կտեղադրվի, փոխտնօրենը դժվարացավ ժամկետ նշել: Բայց առեւտրի կենտրոնի տնտեսվարողները հույս ունեն, որ տեսչական մարմինը կզիջի եւ կչեղարկի գործունեության դադարեցման մասին կայացրած որոշումը՝ մինչեւ սարքերի հասնելն ու տեղադրվելը:

ԱՐՑԱԽՅԱՆ ՀԱՐՑ

ՀԻԾՈՂՈՒԹՅԱՆ ԹԱՐՄԱՑՈՒՄ

Վերջին օրերին ՀՀ վարչապետ Նիկոլ Փաշինյանը դարբերաբար խոսում է նախկին իշխանությունների մասին եւ նրանց մեղադրում, օրինակ, Արցախը Ադրբեջանի մաս ճանաչելու, այն բանակցություններով հանձնելու համար:



Նկատենք՝ 1990-ականների վերջից մինչեւ 2020 -ի պատերազմը բանակցային սեղանին դրված են եղել Արցախյան հարցի կարգավորման 7 հիմնական տարբերակներ, որոնք այս ընթացքում տարբեր անվանումներ են ստացել: ArmLur.am-ը պարբերաբար կներկայացնի մինչեւ այս եղած սկզբունքներն ու հարցի կարգավորման տարբերակները, դրանց ձախողման պատճառները:

Այս անգամ խոսենք Արցախյան հարցի կարգավորման փաթեթային եւ փուլային տարբերակների մասին: Արցախի հարցում փաթեթային տարբերակը նախատեսում էր, որ Ղարաբաղը պետք է լինի Ադրբեջանի կազմում՝ նախկին ԼՂԻՄ -ի սահմաններով եւ լայն ինքնավարությամբ:

1996 թվականի դեկտեմբերին Լիսաբոնում ԵԱՀԿ գագաթնաժողովին մասնակցում էին ավելի քան 50 երկիր, այդ թվում՝ Հայաստանն ու Ադրբեջանը: Ամփոփիչ հռչակագրի 20-րդ կետը պետք է վերաբերեր Ղարաբաղյան հակամարտությանը, սակայն Հայաստանն ու Ադրբեջանը համաձայնության չեկան այդ կետի բովանդակության հարցում: Այն ժամանակ նախագահ Հեյդար Ալիեւը պնդում էր, որ Ադրբեջանի տարածքային ամբողջականության հարցը ներառվի պարբերությունում, Հայաստանը դեմ էր այդ ձեւակերպմանը եւ վետո կիրառեց:

Ի պատասխան՝ Ադրբեջանը սպառնաց վետո դնել ողջ ամփոփիչ հռչակագրի վրա, եթե Ադրբեջանի տարածքային ամբողջականության հարցը չընդգրկվի փաստաթղթում: Բանակցությունների արդյունքում Ղարաբաղյան հակամարտության վերաբերյալ պարբերությունն ընդհանրապես հանվեց հռչակագրի տեքստից: Փաթեթային համաձայնագրով նախատեսվում էր, որ կողմերը պիտի ճանաչեին Ադրբեջանի եւ Հայաստանի տարածքային ամբողջականությունը, իսկ Լեռնային Ղարաբաղը պետք է պետական եւ տարածքային կազմավորում լիներ Ադրբեջանի կազմում: Իսկ ինքնորոշումը պետք է կյանքի կոչվեր Ադրբեջանի եւ Լեռնային Ղարաբաղի իշխանությունների միջեւ կնքված համաձայնագրով, որը պետք է հավանության արժանանար Մինսկի համաժողովի կողմից, ապա ներառվեր Ադրբեջանի եւ Լեռնային Ղարաբաղի սահմանադրություններում: Այս տարբերակին կտրականապես դեմ էր Արցախը, Հայաստանը՝ ոչ այնքան:

Այս ամենից հետո պարզ դարձավ, որ համանախագահները կողմերին առաջարկեցին հարցը լուծել փուլ առ փուլ, այսինքն՝ կարգավիճակի հարցը թողնել ապագային՝ մինչ այդ կենտրոնանալով մյուս հարցերի վրա, որոնց վերաբերյալ տարաձայնությունները շատ չէին., դրանց թվում էին զորքերի դուրսբերումը Ղարաբաղի հարակից շրջաններից, բացառությամբ Լաչինի, բուֆերային ու բաժանարար գոտիների ստեղծումը, միջազգային խաղաղապահների տեղակայումը, տեղահանվածների վերադարձը, ապաշրջափակումն ու կոմունիկացիաների վերականգնումը: Հայաստանի ու Ադրբեջանի նախագահները որոշ վերապահումներով, բայց ընդունել էին այս տարբերակը՝ որպես հիմք հետագա բանակցությունների համար: Ստեփանակերտը կրկին մերժել էր: Հայաստանում լուրջ տարաձայնություններ կային փուլային տարբերակի շուրջ, որոնք, ի վերջո, հանգեցրին ներքաղաքական ճգնաժամի եւ Լեւոն Տեր-Պետրոսյանի հրաժարականին:

ՆԱԻՐԱ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

ՕՐՎԱ ԽՃԱՆԿԱՐ

ՀՀ ՆԱԽԱԳԱՀԻ ՍՏՈՐԱԳՐՄԱՄԲ

Նախագահ Վահագն Խաչատուրյանը հրամանագիր է ստորագրել, որով քննիչների է պարգեւատրել:

«Հիմք ընդունելով վարչապետի միջնորդությունը, համաձայն Սահմանադրության 136-րդ հոդվածի, ինչպես նաեւ «Հայաստանի Հանրապետության պետական պարգեւների եւ պատվավոր կոչումների մասին» օրենքի 5.3-րդ հոդվածի 1-ին մասի՝իրավակարգի եւ օրինականության ամրապնդման գործում ներդրած ավանդի համար Մխիթար Գոշի մեդալով պարգեւատրել՝

Ազատ Լյուդվիգի ԳԵՎՈՐԳՅԱՆԻՆ Հայաստանի Հանրապետության քննչական կոմիտեի տարածքային քննչական վարչությունների գործունեության վերահսկողության գլխավոր վարչության պետ

Արմեն Սամվելի ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆԻՆ Հայաստանի Հանրապետության քննչական կոմիտեի զինվորական քննչական գլխավոր վարչության հատկապես կարեւոր գործերի քննության վարչության հատկապես կարեւոր գործերով ավագ քննիչ»,- նշվում է հրամանագրում:

ՊԱՏԳԱՄԱՎՈՐԸ ԴԱՏԱՊԱՐՏԵԼ Է

Իռլանդացի պատգամավոր Փոլ Գավանը ԵԽԽՎ լիագումար նիստում բարձրաձայնել է Հայաստանի ինքնիշխան տարածք ադրբեջանական ուժերի ներխուժման մասին, շեշտել Ադրբեջանի պատերազմական հանցագործությունների, քաղաքացիական ենթակառուցվածքները, թիրախավորելու փաստերը:

Փոլ Գավանը ելույթ է ունեցել ԵԽԽՎ-ում Հայաստանի եւ Ադրբեջանի միջեւ ռազմական գործողությունների, նաեւ քաղաքացիական ենթակառուցվածքների թիրախավորման վերաբերյալ հարցերի քննարկման շրջանակում:

ԵԽԽՎ պատգամավորը հստակ ընդգծել է, որ բախումները սեպտեմբերին տեղի են ունեցել Հայաստանի ինքնիշխան տարածքում: «Կարծում եմ՝ կարեւոր է, որ բոլոր բռնությունները տեղի են ունեցել Հայաստանի տարածքում: Դրանից ոչ մեկը չի եղել Լեռնային Ղարաբաղի վիճելի շրջանում»,-նշել է պատգամավորը:

ԴԵՍՊԱՆՈՒԹՅՈՒՆԸ ԱՇԽԱՏՈՒՄ Է

Ուկրաինայում Հայաստանի դեսպանությունը շարունակում է աշխատել՝ միաժամանակ ձեռնարկելով անվտանգության անհրաժեշտ եւ հասանելի միջոցներ: Այս մասին ասել է Հայաստանի արտաքին գործերի նախարարության խոսնակ Վահան Հունանյանը:

Հունանյանը նաեւ հայտնեց, որ հոկտեմբերի 10-ին Կիեւին հասցրած հարվածներից ՀՀ դեսպանության շենքը չի վնասվել:

Ուկրաինական լրատվամիջոցները հոկտեմբերի 10-ին հայտնեցին Ռուսաստանի կողմից երկրի տարբեր հատվածներում ավելի քան 84 հրթիռային եւ ավիացիոն հարվածների մասին: Մասնավորապես, հարվածներ են արձանագրվել Վիննիցայի, Լվովի, Կիրովոգրադի, Նիկոլաեւի, Պոլտավայի, Տերնոպոլի, Ժիտոմիրի եւ Կիեւի մարզերում:

ԻՐԱՎԱԿԱՆ

ԳԱՂՏՆԱԼՍՄԱՆ ԳՈՐԾ

Ո՞Վ Է ՊԱՐԳԵՎԱՏՐՎԱԾ ՔՆՆԻՉԸ

Երկու օր առաջ Քննչական կոմիտեն Քննչական կոմիտեի ծառայողների օրվա կապակցությամբ մի շարք քննիչների պարգևներ շնորհեց: Նկատենք, որ Նիկոլ Փաշինյանի անվան հուշամեդալ ստացավ ԱԱԾ նախկին տնօրեն Արթուր Վանեցյանի, Նիկոլ Փաշինյանի, Սասուն Խաչատրյանի գաղտնալսման գործով քննիչ, ՀՀ քննչական կոմիտեի հատկապես կարևոր գործերի քննության գլխավոր վարչության մարդկանց թրաֆիֆինգի, անչափահասների սեռական անձեռնմխելիության դեմ ուղղված եւ թմրամիջոցների ապօրինի շրջանառության հանցագործությունների քննության վարչության պետ Հովհաննես Համբարյանը:

Ի դեպ, գրել էինք, որ այս տարի լրացավ Ազգային անվտանգության ծառայության նախկին տնօրեն Արթուր Վանեցյանի եւ Հակակոռուպցիոն կոմիտեի նախագահ Սասուն Խաչատրյանի գաղտնալսման գործով 4-րդ տարին:

Դեռեւս մեկ տարի առաջ ԱԱԾ նախկին տնօրեն Արթուր Վանեցյանի եւ Սասուն Խաչատրյանի հեռախոսազրույցի գաղտնալսման գործը կարճվել էր՝ հանցակազմի բացակայության հիմքով, իսկ վարչապետ Նիկոլ Փաշինյանի, Արթուր Վանեցյանի եւ Սասուն Խաչատրյանի հեռախոսային խոսակցություններն ապօրինի ձայնագրելու եւ համացանցում տարածելու դեպքի առթիվ հարուցված քրեական գործը կասեցված էր:

Այս գործով երեքն էլ որպես տուժող են ճանաչվել ու հարցաքննվել: Նկատենք, սակայն, որ վարչապետ Նիկոլ Փաշինյանի, Արթուր Վանեցյանի եւ Սասուն Խաչատրյանի հեռախոսային խոսակցություններն ապօրինի ձայնագրելու եւ համացանցում տարածելու դեպքի առթիվ հարուցված քրեական գործով նրանք հարցաքննվել էին 1.5 տարի առաջ: Ըստ էության, 4 տարվա ընթացքում իրավապահներին այդպես էլ չի հաջողվել բացահայտել գաղտնալսման դեպքն ու պարզել, թե, ի վերջո, ով էր կազմակերպել, իրականացրել, այնուհետեւ հրապարակել գաղտնալսված հեռախոսազրույցը:

Հիշեցնենք, որ երկու տարի առաջ՝ 2018-ի սեպտեմբերի 11-ին, համացանցում էր հայտնվել Վանեցյանի եւ Խաչատրյանի աղմկահարույց հեռախոսազրույցի ձայնագրությունը: Նրանք 8-րոպեանոց հեռախոսազրույցի ընթացքում քննարկում էին Հայաստանի նախկին նախագահ Ռոբերտ Քոչարյանի կալանքի հարցը, ինչպես նաեւ ՀԱՊԿ գլխավոր քարտուղար Յուրի Խաչատուրովի եւ ՊՆ նախկին ղեկավար Միքայել Հարությունյանի դեմ հարուցված քրեական գործերը: Գաղտնալսման հրապարակումից երկու տարի անց՝2020 թվականի հունիսի 10-ին, Քննչական կոմիտեի նախկին ղեկավար, նախկին նախագահ Հայկ Գրիգորյանը հայտարարել էր, որ գաղտնալսման գործը բացահայտված է:

Ազգային ժողովում լրագրողների հետ զրույցի ժամանակ ՀՀ քննչական կոմիտեի նախկին նախագահ Հայկ Գրիգորյանը հայտարարել էր, թե հարցումներ են ուղարկել որոշ երկրներ եւ սպասում են պատասխաններին, սակայն պատասխանները այդպես էլ չեկան:

Ավելին՝ «Ժողովուրդ» օրաթերթին հայտնի էր դարձել, որ ՀՀ քննչական կոմիտեից զանգահարել են նշված երկրների իրավապահ մարմիններին եւ խնդրել, որպեսզի հարցմանը պատասխանեն, սակայն այդպես էլ չեն պատասխանել: Այլ ուժային կառույցներից էլ են գործին խառնվել, բայց դարձյալ սայլը տեղից չի շարժվել:

ՔՆԱՐ ՄԱՆՈՒԿՅԱՆ

ՄԱՐՔ

ԴԱՆԱԿԱՀԱՐՈՒԹՅԱՆ ԴԵՊՔ

ArmLur.am-ին հայտնի դարձավ, որ դանակահարություն է տեղի ունեցել Արմավիրի մարզում: Երեկ առավոտյան՝ լուսադեմին, «Վաղարշապատ» Բ/Կ-ից ահազանգել են իրավապահներին, որ «առաջակողային մակերեսի չթանփացող ծակած-կտրած վերք անցումով որովայնի առաջային պատ ձախից արտաքին արնահոսությամբ» ախտորոշմամբ իրենց մոտ բուժօգնության է դիմել անչափահաս Նարեկ Պ-ն: Անմիջապես հիվանդանոց են գնացել իրավապահները, որտեղ Նարեկ Պ-ն պատմել է, թե, իբր, ընկել է առվի մեջ:

Իրավապահները չեն հավատացել տղայի խոսքերին եւ սկսել են ուսումնասիրել դեպքը: Պարզվել է, որ Արմավիրի մարզի Փարաքար գյուղում վիճաբանություն է եղել, որի ժամանակ Հովհաննես Ա-ն դանակով հարվածել է Ն.Պ-ին՝ պատճառելով նշված մարմնական վնասվածքը: Այս պահին իրավապահները փնտրում են դանակահարողին:

Իսկ ինչո՞ւ են դանակահարել անչափահաս տղային: ArmLur.am-ին հասած լուրերի համաձայն՝ վեճը սկսվել է աղջկա համար:

ԿԱՆԽԵԼ ԵՆ ԿԱՄՐՋԻՑ ՆԵՏՎԵԼԸ

ArmLur.am-ին հայտնի դարձավ, որ 31 տարեկան տղամարդը փորձել է իրեն ցած նետել Կիեւյան կամրջից: Վերջինիս նկատել են ոստիկանները եւ երկար ժամանակ նրա հետ զրույցից հետո կարողացել են կանխել նրա գործողությունը: Ի դեպ, իրավապահները արձանագրել են, որ սա առաջին դեպքը չէ, որ նույն տղամարդը գալիս է կամրջի մոտ եւ փորձում վերջ տալ կյանքին: Նա մի քանի անգամ նման փորձեր արել է, սակայն ոստիկանները կանխել են:

ԴԱՆԱԿԻ ՀԱՐՎԱԾՆԵՐ

ArmLur.am-ին հայտնի դարձավ, որ հոկտեմբերի 10-ին՝ժամը 11.10-ին, «Տոնոյան» հիվանդանոցից իրավապահներին հայտնել են, որ «կրծքավանդակի կտրած-ծակած վերք» ախտորոշմամբ բուժօգնության է դիմել Տիգրան Հարությունյանը:

Ավելի ուշ իրավապահները պարզել են, որ եղել է վիճաբանություն, ինչի ժամանակ Տիգրան Հարությունյանին դանակի հարվածներ է հասցրել եւ մարմնական վնասվածքներ պատճառել Ղուկաս Գրիգորյանը: Վերջինիս իրավապահները փնտրում են: Ի դեպ, դանակահարված երիտասարդը եւ դանակահարողը ուսանողներ են:

Ք. ՄԱՆՈՒԿՅԱՆ

ԼՈՒՐԵՐ

ԾԵԾԵԼ ԵՆ ԱՐԵՎԱՇԱՏՅՈՒՆ

Ոստիկանության Մասիսի բաժնի ծառայողները, իրացնելով օպերատիվ տվյալները եւ ձեռնարկելով օպերատիվ-հետախուզական միջոցառումներ, պարզել են, որ սեպտեմբերի 30-ին՝ժամը 22.30-ի սահմաններում, Հայանիստ գյուղի Հայկ Բժշկյանց փողոցի գիշերային ակումբում վիճաբանություն էր եղել Արմավիրի մարզի Արեւաշատ գյուղի 34-ամյա մի բնակչի եւ երեւանցի երկու եղբայրների միջեւ:

Ոստիկանությունից հայտնում են, որ վիճաբանությունն այնուհետեւ շարունակվել էր դրսում: Եղբայրները ծեծի էին ենթարկել 34-ամյա արեւաշատցուն՝ պատճառելով մարմնական վնասվածքներ: Ըստ ստացված տեղեկության՝եղբայրները խուլիգանությունը կատարել էին գազային ատրճանակի գործադրմամբ:

Դեպքի առթիվ հոկտեմբերի 1-ին Մասիսի քննչական բաժնում նախաձեռնվել էր քրեական վարույթ:

ՎՐԱԵՐԹԻ ԵՆԹԱՐԿՎԱԾԸ ՄԱՀԱՑԵԼ Է

Հոկտեմբերի 10-ին 28-ամյա եղբայրները հայտնաբերվել եւ ներկայացվել են Մասիսի քննչական բաժին: Նրանք ձերբակալվել են: Ձեռնարկվում են միջոցառումներ՝ գազային ատրճանակը հայտնաբերելու ուղղությամբ: Նախաքննությունը շարունակվում է:

Հոկտեմբերի 10-ին՝ ժամը 19.30-ի սահմաններում, Եղվարդ-Զորավան ճանապարհին իրար են բախվել «ՎԱԶ-2106» եւ «ՎԱԶ-2107» մակնիշի մեքենաներ: Պատճառվել է նյութական վնաս: Բախումից որոպեներ անց՝ժամը 19.45-ի սահմաններում, նույն վայրում «ԳԱԶ-24» մակնիշի մեքենայի վարորդը վրաերթի է ենթարկել «ՎԱԶ-2107»-ի վարորդին, երկու այլ քաղաքացիների, ապա բախվել «Օպել» մակնիշի մեքենայի եւ դիմել փախուստի: Վրաերթի ենթարկվածները տեղափոխվել են հիվանդանոց:

Ձեռնարկված միջոցառումների արդյունքում նույն օրը՝ ժամը 22.30-ին, «ԳԱԶ-24»-ի 67-ամյա վարորդը հայտնաբերվել եւ ձերբակալվել է: Նա ներկայացվել է նախաքննական մարմնին:

Ժամը 23.30-ին հիվանդանոցից հաղորդում է ստացվել, որ վրաերթի ենթարկվածներից 31-ամյա Մնացական Սողոմոնյանը մահացել է: Կատարվում է նախաքննություն:

● *Ըստ ոստիկանության տվյալների՝ հոկտեմբերի 10-ից 11-ը Հայաստանի Հանրապետությունում բացահայտվել է հանցագործության 46 դեպք, որոնցից 4-ը՝նախկինում կատարված:*

ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ

ՄԱՐԴ

ԱՐԴՅՈՒՆՔ ՉԵՆ ՏՎԵԼ

Այս տարվա հուլիսին Իջեւանի համայնքապետարանը ձեռք բերեց «Կամազ» մակնիշի աղբահավաք 2 ավտոմեքենա եւ 350 աղբարկղ: Այդ աղբարկղերը համալրեցին Իջեւանում առկա շահագործվող աղբամանների քանակը: Իջեւան քաղաքում աղբամանների պակաս չկա, սակայն քաղաքի շատ բնակիչներ դրանցից պատշաճ ձեւով չեն օգտվում: Իջեւանի բնակիչներ կան, որոնք իրենց տան կենցաղային աղբը ցելոֆաններով տանում, դնում են պլաստմասսե աղբարկղի կողքին՝ փոխանակ աղբարկղի կափարիչը բացելու եւ աղբը աղբամանը նետելու: Իջեւան քաղաքի աղբահանությունն իրականացող կոմունալ ծառայության աշխատողները բնակիչներին բազմիցս հորդորել են աղբը նետել աղբարկղ, ոչ թե տեղադրել դրա կողքին, սակայն այդ հորդորներն արդյունք չեն տալիս: Իջեւան քաղաքում այդ առթիվ հիշում են Իջեւանին հարակից Գանձաքար գյուղի բնակիչ, այժմ հանգուցյալ Գորենի հետեւյալ խոսքերը՝ Իջեւանը քաղաք կդառնա, իջեւանցիները քաղաքի բնակիչներ չեն դառնա:

ՎՆԱՍ՝ ՊԵՏՈՒԹՅԱՆԸ

Դիլիջանի ազգային պարկում՝ որպես բնության հատուկ պահպանվող տարածքում, ընդհանրապես արգելված են ծառերի հատումները, սակայն նախկինում ազգային պարկի տարածքում կատարվել են ծառերի ապօրինի հատումներ, այն էլ՝ ծառերը հատողների հետ ազգային պարկի անտառապահների հանցավոր համագործակցությամբ: Բաբկեն Բարսեղյանին մեղադրանք է առաջադրվել այն բանի համար, որ նա, 2020թ.-ի նոյեմբերի 24-ից երեք ամիս փորձաշրջանով աշխատանքի ընդունվելով «Դիլիջանի ազգային պարկ» ՊՈԱԿ-ում որպես անտառապահ, հանդիսանալով նյութական պատասխանատու անձ, Դիլիջան քաղաքի Կալինինի փողոցի բնակիչ Դավիթ Մարկոսյանի կողմից «Դիլիջանի ազգային պարկ» ՊՈԱԿ-ի տարածքից ապօրինի կերպով թաց, կանգուն ծառեր հատելու եւ այդ ծառերից ստացված յուրաքանչյուր 1 խմ վառելափայտի դիմաց 5000 դրամ գումար վերցնելու հարցի շուրջ վերջինիս հետ պայմանավորվածություն ձեռք բերելով, չի կատարել իր վրա դրված պարտականությունները եւ ակնհայտ ապօրինի անգործություն դրսեւորելով՝ թույլատրել է Դ. Մարկոսյանին ապօրինի հատել ընդհանուր 15 հատ տարբեր տեսակի թաց կանգուն ծառեր՝ պետությանը պատճառելով 1925000 դրամի վնաս: Բ. Բարսեղյանին մեղադրանք է առաջադրվել ՀՀ քրեական օրենսգրքի 311 հոդվածի 2-րդ մասով, Դավիթ Մարկոսյանին մեղադրանք է առաջադրվել ՀՀ քրեական օրենսգրքի 296 հոդվածի 3-րդ մասով եւ 312 հոդվածի 1-ին մասով: Նրանց նկատմամբ խափանման միջոց է ընտրվել չհեռանալու մասին ստորագրությունը: Սույն քրեական գործով դատավարությունն ընթանում է Տավուշի մարզի առաջին ատյանի դատարանի Իջեւան քաղաք նստավայրում:

ՈՍԿԱՆ ՍԱՐԳՍՅԱՆ
Տավուշ

44-ՕՐՅԱ ՊԱՏԵՐԱԶՄ

ԶՐԿՎԵԼ ԵՆ ՀԱՇՄԱՆԴԱՄՈՒԹՅԱՆ ԿԱՐԳԻՑ

44-օրյա պատերազմի 277 մասնակից զրկվել է հաշմանդամության կարգից: ՀՀ աշխատանքի եւ սոցիալական ապահովության նախարարությունից տեղեկացրել են, որ 261 մասնակից, որոնք ստացել էին հաշմանդամության 3-րդ կարգ, վերափորձաքննության ժամանակ զրկվել են կարգից, եւս 16 հոգի զրկվել են կարգից՝ մինչ այդ ունենալով հաշմանդամության երկրորդ կարգ, իսկ 128 հոգու հաշմանդամության կարգը 2-րդ-ից իջեցվել է 3-րդ:

Նշենք, որ 44-օրյայի ժամանակ հաշմանդամ դարձած տղաների հաշմանդամության կարգը տրվել է՝ հիմք ընդունելով 2003թ. հաստատված բժշկասոցիալական փորձաքննության չափորոշիչները:

2023 թվականի փետրվարի 1-ից արդեն անձի հաշմանդամության սահմանման գործընթացն իրականացվելու է այլ՝ անձի ֆունկցիոնալության գնահատման համակարգի միջոցով:

«Վերոգրյալի հիմքով՝ ՀՀ կառավարության 2022 թվականի հուլիսի 28-ի «Անձի ֆունկցիոնալության գնահատման կարգը հաստատելու մասին» N 1180-Ն որոշման հավելվածով հաստատվել է անձի ֆունկցիոնալության գնահատման կարգը, իսկ ՀՀ կառավարության 2022 թվականի հուլիսի 28-ի «Անձի ֆունկցիոնալության գնահատման չափորոշիչները եւ գործիքները հաստատելու մասին» N 1177-Ն որոշման հավելվածով՝ հաստատվել անձի ֆունկցիոնալության գնահատման չափորոշիչները եւ գործիքները»,- գրված է նախարարության հայտարարության մեջ:

Այսինքն՝ հետայսուց եւս հաշմանդամության կարգ սահմանելիս հաշվի չի առնվելու՝ շահառուն ռազմական գործողությունների ժամանակ է հաշմանդամ դարձել, թե այլ պայմաններում: Հաշմանդամության կարգ սահմանելու հիմքում բոլոր դեպքերում դրվելու են նույն չափորոշիչները: Անձի հաշմանդամության սահմանման չափորոշիչները բխում են հաշմանդամության սահմանումներից եւ դիտարկվում են անձի օրգանիզմի ֆունկցիաների, անձի գործունեության եւ մասնակցության սահմանափակումների համատեքստում եւ չեն կարող կախված լինել ռազմական գործողություններին մասնակցելու հանգամանքից: Ինչպես նշված է 2023թ. փետրվարի 1-ից ուժի մեջ մտնող որոշման հավելվածում, անձի ֆունկցիոնալության գնահատման յուրաքանչյուր առանձին դեպքի համար ձեւավորվելու է գնահատող նոր հանձնաժողով: Գնահատող հանձնաժողովի անդամները պատահականության սկզբունքով էլեկտրոնային համակարգի կողմից ինքնաշխատ եղանակով ընտրվելու են ֆունկցիոնալության գնահատման նպատակով ներգրավված մասնագետների ռեեստրից:

Համաձայն «Անձի ֆունկցիոնալության գնահատման կարգը հաստատելու մասին» որոշման՝ անձի ֆունկցիոնալության գնահատմանն առնչվող ամբողջ փաստաթղթաշրջանառությունը 2023 թվականի փետրվարի 1-ը պետք է իրականացվի էլեկտրոնային եղանակով՝ e-disability էլեկտրոնային համակարգի օգնությամբ:

Վերջինիս նախագծումը նախատեսվում է ավարտել մինչեւ 2022 թվականի նոյեմբերի 1-ը, իսկ մինչեւ 2023 թվականի հունվարի 10-ը՝ հասցնել ապահովել փորձնական կիրարկումը եւ ներդրումը:

ԳԵՐԱԿԱՏԱՐՎԵԼ ԵՆ

ՀԱՐԿԱՅԻՆ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ՑՈՒՅԱՆԻՇ

2022 թվականի 9 ամիսների ընթացքում պետական բյուջեի հարկային եկամուտները կազմել են 1 տրիլիոն 412 մլրդ դրամ. հարկային եկամուտները գերակատարվել են ավելի քան 77 մլրդ դրամով:

Արձանագրվել է հարկային եկամուտների հավաքագրման պատմական ռեկորդ: Պետական եկամուտների կոմիտեի նախագահ Ռուստամ Բադասյանը հանրային ներկայացրել է ընթացիկ տարվա ինն ամիսների հարկային եկամուտների ցուցանիշները: Նույն ժամանակահատվածում հարկ վճարողներին վերադարձվել է ռեկորդային չափով գումար՝ 172 մլրդ դրամ, իսկ 2022 թ. 9 ամիսների տվյալներով՝ եկամուտ (հարկման բազա) ապահոված աշխատատեղերի թվաքանակը կազմել է շուրջ 663 հազար՝ գերազանցելով նախորդ տարվա ցուցանիշը՝ 36.8 հազարով կամ 6 տոկոսով, իսկ 2020 թ. ցուցանիշը՝ շուրջ 60 հազարով: Հարկեր/ՀՆԱ ցուցանիշը 2021 թվականին կազմել է 22.7 տոկոս: Ընթացիկ տարում նախատեսվում է ունենալ 11 տոկոս տնտեսական աճ եւ 8 տոկոս գնաճ, իսկ հարկեր/ՀՆԱ ցուցանիշը բարելավվելու է 0.5 տոկոսային կետով եւ կազմելու է 23.2 տոկոս: «Սա նշանակում է, որ հարկային եկամուտներն ավելի արագ են աճում, քան ՀՆԱ-ն, ինչն այլ հավասար պայմաններում վերագրվում է հարկային վարչարարությանը եւ հարկային կարգապահության բարելավմանը: Հարկային վարչարարությունը տարեցտարի իրականացվում է ավելի թիրախային՝ հիմնված վերլուծական գործիքների վրա»,- հայտնել է ՊԵԿ նախագահ Ռուստամ Բադասյանը:

ՊԵԿ նախագահն անդրադարձել է նաեւ վերջին շրջանում մաքսային համակարգում իրականացված բարեփոխումներին: Մաքսային գործառնությունների վերանայման արդյունքում հանվել են փաստաթղթային մի շարք ոչ ֆորմալ գործընթացներ: Ներդրվել է նախնական հայտարարագրման համակարգը: 24/7 ռեժիմով սահմանին ներմուծվող ապրանքների բացթողումն իրականացվում է ժամանումից հետո՝ միջինում 15 րոպեից մինչեւ 3 ժամում:

Երեւանում նոյեմբերի 1-ից մաքսային ծառայողի պատրաստման դասընթացը հաջողությամբ ավարտած եւ ընտրված մասնակիցներն աշխատանքի կանցնեն բարեփոխման նոր փուլ սկսած մաքսային ծառայության համակարգում: Քննական փուլը հաղթահարել է 160 մասնակից:

● Անցած 1 օրվա ընթացքում Հայաստանի Հանրապետությունում արձանագրվել է 20 ՃՏՊ. 1 մարդ զոհվել է, 29-ը՝ ստացել տարբեր աստիճանի մարմնական վնասվածքներ:

«Ակբա» բանկ

ԱՐՇԱՎԻ ՀԵՐՈՍԸ

«Ակբա» բանկը նոր արշավի շրջանակում ներկայացնում է երեք հերոս, որոնք հաղթահարում են դժվարություն, ունեն կամք, ձգտում եւ ոգեշնչում:

Արշավի գաղափարը ծնվել է թիմային քննարկումներից հետո: Հիմքում բանկի առաքելությունն է ոգեշնչել եւ խթանել գործընկերներին: Արշավի շրջանակում բանկն իր գործընկերներին եւ հաճախորդներին տրամադրում է մինչեւ 10 միլիոն ՀՀ դրամ սպառողական վարկեր՝ առանց գրավի եւ առանց երաշխավորի:

«Ակբա» բանկի հաճախորդները սպառողական վարկը կարող են ստանալ նաեւ acba digital համակարգի միջոցով: Վարկային պայմանագրի ստորագրումը եւ վարկի տրամադրումը եւս կարող է իրականացվել առանց բանկ այցելության՝ էլեկտրոնային եղանակով, 24/7 ռեժիմով:

«Այս արշավով եւս մեկ անգամ շեշտում ենք մեր պատրաստակամությունը լինել մեր հաճախորդների կողքին՝ հասկանալով, որ ֆինանսական միջոցները շատ կարեւոր են, սակայն ամենակարեւորը մարդկանց ձգտումն է ունենալ նպատակներ, երազանքներ եւ հասնել այդ երազանքներին: Սա ամենակարեւորն է: Մնացած բոլոր դեպքերում «Ակբա» բանկը հաճախորդների կողքին է: Որպես «հերոս» միշտ տեսել ենք մեր հաճախորդին, որը մտածել է, երազել է, արարել է: Արշավի խորհրդանիշը չհանձնվող մարդու տեսակն է, որովհետեւ այսօր այդ տեսակի կարիքը շատ ունենք: Ամեն մարդու հաջողությունն իր ձեռքերում է. պետք է կենտրոնանալ այն նպատակի վրա, որին ձգտում ես, եւ ամեն ինչ անել այդ նպատակին հասնելու համար»,- նշում է «Ակբա» բանկի բիզնես գործառույթների համակարգման գծով գլխավոր գործադիր տնօրենի տեղակալ Արսեն Մելքոնյանը:

«Մեր արշավի առաքելությունը կայանում է նրանում, որ դո՛ւ ես քո հաջողության երաշխավորը, դու ինքդ պետք է պատասխանատվություն վերցնես քո բոլոր քայլերի ու նպատակների համար եւ համառորեն, մեծ ջանքեր գործադրելով հասնես քո նպատակին եւ լուծես քո առջեւ դրված բոլոր խնդիրները»,- նշում է բանկի Մարքեթինգային հաղորդակցությունների բաժնի ղեկավար Սոնա Պետրոսյանը:

«Մեր բանկի հաճախորդները եւ՛ acba digital-ով, եւ՛ բանկի մասնաճյուղերում կարող են ստանալ մինչեւ 10 միլիոն դրամ սպառողական վարկ, որի որոշումը կայացվում է անմիջապես ավտոմատ համակարգերով: Վերջինս դարձել է ավելի խելացի եւ հաշվի է առնում հաճախորդների ամբողջ փորձառությունը, որ ունեցել են բանկում»,- նշում է բանկի Մանրածախ բիզնես պրոդուկտների պլանավորման եւ կառավարման բաժնի ղեկավար Էլիզա Հայրապետյանը:

«Ակբա» բանկն իր բոլոր գործընկերների կողքին է, միշտ պատրաստ է ներկայացնել լուծումներ, որոնք կարող են իրագործել երազանքներ:

ՀԱՍՏԱՏՎԵԼ ԵՆ

2023 ԹՎԱԿԱՆԻ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ ՑԱՆԿԸ

Կառավարությունը հաստատել է ֆիզիկական կուլտուրայի եւ սպորտի զարգացման 2023 թվականի տարեկան ծրագիրը եւ միջոցառումների ցանկը:

Ծրագրի խնդիրներն են օլիմպիական եւ պարալիմպիկ խաղերին, աշխարհի եւ Եվրոպայի առաջնություններին եւ այլ խոշոր միջազգային մրցաշարերին մասնակցելու համար մարզիկների եւ մարզաձեւերի ազգային հավաքական թիմերի արդյունավետ նախապատրաստման եւ մասնակցության ապահովումը, ֆիզիկական կուլտուրայի եւ սպորտի զարգացման սոցիալական առաջնայնության ապահովման համար իրավական եւ տնտեսական մեխանիզմի մշակումն ու իրագործումը, ինչպես նաեւ բնակչության ֆիզիկական դաստիարակության համակարգի արդյունավետության բարձրացման եւ զարգացման համար պայմանների ստեղծումը:

Հայաստանի Հանրապետության կառավարության որոշման նախագծի ընդունումը 2023 թվականի ՀՀ պետական բյուջեի եկամուտներում եւ ծախսերում կառաջացնի լրացուցիչ ֆինանսական միջոցների ներգրավման անհրաժեշտություն, որը պայմանավորված է նոր միջոցառումների նախատեսմամբ եւ նախապես նախատեսված չափաքանակների հիմնավորված գերազանցմամբ:

Մասնավորապես 2022 թվականին աջակցություն ստացած 33 մարզական ֆեդերացիաների փոխարեն՝ 2023 թվականին ֆինանսական աջակցություն կստանան 36-ը: Լրացուցիչ ֆինանսական միջոցների ներգրավման անհրաժեշտություն է առաջացել նաեւ դոպինգի դեմ պայքարում: 2022 թվականին մարզական միջոցառումների օրացույցում հայտնվել են նոր մրցումներ, որոնք դոպինգի օգտագործման տեսանկյունից բարձր ռիսկեր ունեն: Մասնավորապես, պարտադիր է դարձել դոպինգ թեստավորման (20-24 թեստ) անցկացումը «Վարչապետի գավաթ» հեծանվավազքի, լողի եւ վազքի մրցումների ժամանակ: 2022-2024 թվականներին Հայաստանում կայանալու են միջազգային խոշոր մրցումներ՝ աշխարհի եւ Եվրոպայի առաջնություններ, որտեղ մեծ թվով թեստերի քանակը (80-100 թեստ) եւս պարտադիր է: Նախատեսվում են 2 նոր միջոցառումներ՝

-ամառային օլիմպիական խաղերին նախապատրաստվելու նպատակով ֆինանսական աջակցության տրամադրում,

-«Հայաստանի Հանրապետության վարչապետի գավաթ» դպրոցականների թիմային խճուղավազքի անցկացում:

Այսպիսով, սպորտի բնագավառի պետական քաղաքականությունը միտված է երկու կարեւոր նպատակների:

Առաջինը բնակչության տարբեր տարիքային խմբերի առօրյայում ֆիզիկական կուլտուրայի եւ սպորտի արմատավորման համալիր ծրագրերի իրագործումն է, որը ներառում է բնակչության բոլոր շերտերի ներգրավվածությունը ֆիզիկական կուլտուրայի եւ սպորտի մասսայականացման, բնակչության ֆիզիկական դաստիարակության, ընդհանուր ֆիզիկական պատրաստության մակարդակի բարձրացման, բնակչության շրջանում առողջ ապրելակերպի արմատավորման շրջանակը:

Երկրորդ առաջնահերթությունը միտված է միջազգային մրցասպարեզներում հայ մարզիկների մեդալների նվաճմանը, նոր ռեկորդների գրանցմանը, օլիմպիական եւ պարալիմպիկ խաղերում, աշխարհի եւ Եվրոպայի առաջնություններում, միջազգային մրցաշարերում, ազգային եւ այլ մարզաձեւերում, ադապտիվ սպորտում նոր հաջողությունների արձանագրմանը:

ՀՐԱՊԱՐԱԿԱՅԻՆ ԾԱՆՈՒՑՈՒՄ Գ

«Բի Էս Թի» ՍՊԸ-ն (այսուհետ՝Կազմակերպիչ) «Ակսոն» ԱՀ Բորսայի հարթակում իրականացնելու է բաց աճուրդ համապատասխան փուլերով՝ «դասական» (գնի բարձրացմամբ), այնուհետեւ «հոլանդական» (գնի նվազեցմամբ) եղանակներով: Աճուրդի ընթացքում վաճառվելու են «Արդշինբանկ» ՓԲԸ-ին (այսուհետ՝ բանկ) գրավի իրավունքով պատկանող հետեւյալ լոտերը.

- ք. Երեւան, Աջափնյակ, Հ. Մարգարյան փողոց, 2-րդ նրբանցք, 10 շենք, 17 հասցեում գտնվող 64,4 ք.մ. բնակարան: Լոտի մեկնարկային գինը՝23400000 ՀՀ դրամ:
- Լոռու մարզ, համայնք Վանաձոր ք., Տարոն-2 թաղամաս, ՔՇՀ-3 19 շենք, 11 հասցեում գտնվող 62,5 ք.մ. բնակարան: Լոտի մեկնարկային գինը՝6200000 ՀՀ դրամ:
- Լոռու մարզ, համայնք Ստեփանավան ք., 4-րդ միկրոշրջան, 5-րդ փողոց, 17 հասցեում գտնվող 106.2 ք.մ. բնակելի տուն, 42.4 ք.մ. արհեստանոց, ավտոտնակ, 6.1 ք.մ. գոմ եւ 0,06 հա հողամաս: Լոտի մեկնարկային գինը՝11000000 ՀՀ դրամ:
- Կոտայքի մարզ, համայնք Ջրվեժ, գյուղ Ձորաղբյուր, Բարեկամության փողոց, 23 հասցեում գտնվող 294,57 ք.մ. բնակելի տուն, 1,13 ք.մ. զուգարան, 15,43 ք.մ. /26,23 խ.մ./ պարիսպ, 3,88 ք.մ./7,18 խ.մ./ պարիսպ, 14,74 ք.մ. /29,04 խ.մ./ պարիսպ, 2,01 ք/մ. /2,17 խ.մ./ պարիսպ եւ 0,11999 հա հողամաս: Լոտի մեկնարկային գինը՝58000000 ՀՀ դրամ:
- Գեղարքունիքի մարզ, համայնք Մարտունի ք., Գ. Նժդեհի փողոց, 9 շենք, 25 հասցեում գտնվող 92,2 ք.մ. բնակարան: Լոտի մեկնարկային գինը՝16600000 ՀՀ դրամ:

Լոտերի նկատմամբ սահմանափակումները՝գույքերը գրավադրված են:

Աճուրդի փուլերը՝ք. Երեւան, Սայաթ-Նովա պողոտա, 40 շենք, թիվ 82/31 հասցեում 28.10.2022թ.-ին, ժ. 12:00-ին դասական եղանակով, այնուհետեւ յուրաքանչյուր աշխատանքային օր, նույն վայրում, նույն ժամին՝հոլանդական եղանակով: Աճուրդի ավարտը՝28.11.2022թ.-ին: Աճուրդի մասնակցության նախավճարը սահմանված է համապատասխան գույքի ընթացիկ մեկնարկային գնի 1%-ի չափով, որի վճարման վերջնաժամկետը սահմանված է յուրաքանչյուր աճուրդի փուլի օրվան նախորդող աշխատանքային օրվա ժամը 16:00-ն: Նախավճարը վճարվում է «Բի Էս Թի» ՍՊԸ -ի դրամարկղումաճուրդի կայացման հասցեում, ՀՀ օրենսդրությամբ սահմանված կանխիկի շեմը չգերազանցելու դեպքում, կամ բանկային հաշվին («Արդշինբանկ» ՓԲԸ-ում 2470103374150000 հաշվեհամարին), կամ կազմակերպչի կողմից տրված այլ հաշվեհամարին: Աճուրդին մասնակցելու համար անհրաժեշտ է ներկայացնել՝ ֆիզիկական անձանց համար անձը հաստատող փաստաթուղթ եւ Կազմակերպչի կողմից տրված մասնակցի վկայական (այսուհետ՝աճուրդի վկայական), որը հաստատելու է նաեւ նախավճարի մուծման փաստը, իսկ իրավաբանական անձանց համար՝կանոնադրությունը, իրավաբանական անձանց պետական գրանցման վկայականը, պաշտոնատար անձի կամ ներկայացուցչի լիազորությունները հաստատող փաստաթուղթ եւ աճուրդի վկայական:

Աճուրդում հաղթող է ճանաչվում այն անձը, ով առաջարկել է ամենաբարձր գինը: Վերջին ամենաբարձր գնային հայտ ներկայացրած մասնակիցը, աճուրդավարի մուրճիկի երրորդ հարվածից հետո, համարվում է աճուրդում հաղթած մասնակից: Աճուրդին մասնակցած, սակայն չհաղթած անձի մուծած նախավճարը վերադարձվում է աճուրդն ավարտվելուց հետո մեկ աշխատանքային օրվա ընթացքում: Նախավճարը ենթակա է վերադարձման, եթե աճուրդը համարվում է չկայացած: Եթե աճուրդում հաղթող ճանաչված անձը հրաժարվում է ստորագրել արձանագրությունը կամ առուվաճառքի պայմանագիրը, ապա նա կորցնում է իր մուծած նախավճարը: Եթե Կազմակերպիչը հրաժարվում է ստորագրել արձանագրությունը, ապա նա պարտավոր է աճուրդում հաղթող ճանաչված անձին վերադարձնել նախավճարը:

Նախքան աճուրդի ավարտն աճուրդային լոտի նկատմամբ բանկի գրավի կամ սեփականության իրավունքի դադարման հետեւանքով աճուրդի մասնակիցների կորուստների եւ վնասների համար բանկը որեւէ պատասխանատվություն չի կրում:

Լոտերն ուսումնասիրելու ցանկություն հայտնած անձինք կարող են սույն ծանուցման օրվան հաջորդող օրվանից մինչեւ աճուրդի ավարտը, յուրաքանչյուր աշխատանքային օր, ժ. 10:00-ից մինչեւ 18:00-ն, այցելել վերը նշված հասցեներով եւ ծանոթանալ լոտերի հետ՝այցելությունը նախապես համաձայնեցնելով Կազմակերպչի հետ: Սույն ծանուցումը կարող է փոփոխվել մամուլում հրապարակվելու միջոցով: Աճուրդների անցկացման կանոնակարգին կարող եք ծանոթանալ եւ անվճար ստանալ կանոնակարգի պատճենը, դիմելով Կազմակերպչին՝ք. Երեւան, Սայաթ-Նովա պողոտա, 40 շենք, թիվ 82/31 հասցե: Բոլոր այլ տեղեկությունների համար կարող եք զանգահարել (011) 56-45-13 հեռախոսահամարով կամ այցելել www.llcbst.am, www.akson.am կայքերը:

«Ժողովուրդ» օրաթերթում եւ Armlur.am կայքում գովազդ, հայտարարություն, հաշվետվություն, ծանուցում տեղադրելու համար զանգահարել 094-455-456 հեռախոսահամարով:

ԿԱՐԾԻՔ

ՓԱՌԱՏՈՆ

26 ՆԵՐԿԱՅԱՑՈՒՄ 14 ԲԵՄԱՀԱՐԹԱԿՈՒՄ

Հոբելյանական 20-րդ «Հայ ֆեստ» (HIGH FEST) կատարողական արվեստի միջազգային փառատոնը, որը կրում էր The next 20 years will be better! («Հաջորդ 20 տարիները կլինեն ավելի լավը») խորագիրը, անցկացվեց հոկտեմբերի 1-8-ը՝ հյուրընկալելով 10 երկրից ժամանած ավելի քան 250 մասնակցի եւ հյուրերի՝ հեղինակավոր արվեստագետների, արտմենեջերների, միջազգային փառատոնի նախագահների Ռումինիայից, Ռուսաստանից, Կիպրոսից, Գերմանիայից, Իսրայելից, Էստոնիայից, Իրանից եւ այլ երկրներից:

Փառատոնին երեւանյան 14 բեմահարթակներում ցուցադրվել է ավելի քան 26 ներկայացում: Թատերասերները հնարավորություն են ունեցել դիտելու դրամատիկական, երաժշտական, պարային, մոնոներկայացումներ, մուլտիմեդիային, տիկնիկային, ֆիզիկական, շարժման, վիզուալ, կրկեսային, մանկական, ինչպես նաեւ բացօթյա ներկայացումներ:

Փառատոնի հեղլայները Սանկտ Պետերբուրգի Բորիս Էյֆմանի բալետի ակադեմիական թատրոնի «Ռոդեն՝ նրա հավերժ կուռքը» ներկայացումն է եղել, որի ցուցադրությունը մեծ հաջողություն է ունեցել: Երեւանյան թատրոններից «Հայ ֆեստ»-ի հիմնական ծրագրում հանդես են եկել Երեւանի կամերային, «Համազգային», Հ. Թումանյանի անվան տիկնիկային եւ «Միհր» թատրոնները:

Հիմնական ծրագրից բացի, փառատոնի ընթացքում վարպետության դասեր են անցկացրել թատերագետ Անդրեյ Մոսկվինը (Լեհաստան), պրոդյուսեր Յուկկա Հիտտը (Ֆինլանդիա):

«Արդի հայ թատրոն. նոր միտումներ եւ հիմնախնդիրներ (1990-2022)» խորագրով միջազգային գիտական նստաշրջանի շրջանակներում «Հայ ֆեստ» փառատոնի հետ համագործակցությամբ ՀՀ գիտությունների ազգային ակադեմիայում կայացել է «Կենտրոնական եւ Արեւելյան Եվրոպայի թատերագիտություն» (Studia Teatralne Europy rodkowo-Wschodniej, խմբագիր՝ Անդրեյ Մոսկվին, 2021, N 2, Վարշավա) եռալեզու գիտական հանդեսի շնորհանդեսը: Հանդեսի այս համարի կենտրոնում հայ թատրոնն է, շապիկին՝ Սունդուկյանի անվան ազգային ակադեմիական թատրոնի լուսանկարը եւ FOKUS: ARMENIA գրությունը: Հանդեսում գիտական հրապարակումներով հանդես են եկել Արծվի Բախչինյանը (ՀՀ ԳԱԱ պատմության ինստիտուտ), Նարինե Սարգսյանը (Երեւանի թատրոնի եւ կինոյի պետական ինստիտուտ), Անուշ Ասլիբեկյանը (ՀՀ ԳԱԱ Արվեստի ինստիտուտ), Սառա Նալբանդյանը (ՀՀ ԳԱԱ արվեստի ինստիտուտ), Նազենիկ Սարգսյանը (ՀՀ ԳԱԱ արվեստի ինստիտուտ), Անահիտ Բեքարյանը (ՀՀ ԳԱԱ արվեստի ինստիտուտ):

Փառատոնին ներկայացումներ են ցուցադրվել նաեւ Գյումրիում եւ Վանաձորում:

«Հայ ֆեստ» կատարողական արվեստի միջազգային փառատոնն առաջին անգամ կայացել է 2003-ին: Փառատոնի հիմնադիր նախագահն է Արթուր Ղուկասյանը: 2019-2021 թվականներին Եվրոպական փառատոների ասոցիացիան թվով 715 եվրոպական փառատոներից «Հայ ֆեստ» կատարողական արվեստի միջազգային փառատոնն ընտրել եւ ընդգրկել է 24 լավագույնների ցանկում:

Հոբելյանական փառատոնը կյանքի է կոչվել ՀՀ կրթության, գիտության, մշակույթի եւ սպորտի նախարարության աջակցությամբ:

ՄՈՆՈՆԵՐԿԱՅԱՑՈՒՄ

«ՀԱՆԴԻՍԱՏԵՍԻ ՀԱՄԱԿՐԱՆՔ» ՄՐՑԱՆԱԿ

Դերասաններ Արմեն Քուշկյանն ու Գոռ Համբարձումյանը հոկտեմբերի 5-8-ը մասնակցել են Վիսագինեսում (Լիտվա) կայացած ATSPINDIS միջազգային թատերական XVIII փառատոնին:

Արմեն Քուշկյանը ցուցադրել է «Նաստասիայի դերում՝ իշխան Լեւ Նիկոլաեւիչ Միշկին» մոնոներկայացումը, որի ռեժիսորը ՀՀ ժողովրդական արտիստ Վահե Շահվերդյանն է, իսկ Գոռ Համբարձումյանը հանդես է եկել «MENախոսություն» մոնոներկայացմամբ, որի ռեժիսորը Տաթեւիկ Մելքոնյանն է: Այն «Արմմոնո» փառատոնի նախագիծն է:

Հայկական պատվիրակության կազմում է եղել «Արմմոնո» միջազգային թատերական փառատոնի տնօրեն Մարիաննա Մխիթարյանը:

«Նաստասիայի դերում՝ իշխան Լեւ Նիկոլաեւիչ Միշկին» մոնոներկայացումը՝ Արմեն Քուշկյանի մատուցմամբ, արժանացել է փորձագետների, հանդիսատեսի բարձր գնահատականին եւ փառատոնի գլխավոր մրցանակներից մեկին՝ «Հանդիսատեսի համակրանք»-ին:

ԼՈՒՐԵՐ

ՀՐԱԺԱՐՎԵՑ ԱՇԽԱՏԱՆՔԻՑ

Հայաստանի ֆուտբոլի ֆեդերացիայի գործադիր կոմիտեի անդամ Աննա Թադեւոսյանը չի շարունակի աշխատանքը ՀՖՖ-ում: Այս մասին Թադեւոսյանը հայտնել է սոցցանցերում կատարած գրառմամբ. «Ցանկանում եմ տեղեկացնել, որ այլեւս հարկ չեմ համարում շարունակել իմ աշխատանքը ՀՖՖ գործադիր կոմիտեում, քանի որ այս կառույցը զբաղվում է ամեն ինչով, բացի ֆուտբոլի զարգացումից: Վերջին մեկ տարվա ընթացքում ՀՖՖ ղեկավարությունը կայացրել է մի շարք անհիմն ներքին որոշումներ, ինչի արդյունքում աշխատանքից հեռացվել են մարդիկ, որոնք ջանք չեն խնայել ֆուտբոլի զարգացման համար: ՀՖՖ-ին մաղթում եմ հաջող Fastex բարձրագույն խմբի առաջնություն, քանի որ գործկոմի նիստերը գրեթե միշտ ուղղված են եղել դրան»: Թադեւոսյանը կշարունակի ֆուտբոլային գործունեությունը:

ՆՈՐ ՆԱԽԱԳԻԾ

Disney-ը «Հազար ու մի գիշեր» հեքիաթների ժողովածուի հիման վրա նոր նախագիծ է սկսել, որը կնկարահանվի գիտական ֆանտաստիկա եւ ֆենթեզի ժանրերում: Սցենարային աշխատանքներն իրականացնում է «Գրեյսը Մոնակոյից» կենսագրական ֆիլմի հեղինակ Արաշ Ամելը: Սյուժեի մանրամասները չեն հրապարակվել: Անհայտ են նաեւ ֆիլմի ռեժիսորի անունն ու թողարկման ամսաթիվը: Deadline-ի տեղեկությունների համաձայն՝ ֆիլմը ներշնչված կլինի միջնադարյան արաբական եւ պարսկական հեքիաթներից ու լեգենդներից:

Էկրանավորման շրջանակում անդրադարձ չի լինի մեկից ավելի էկրանավորված Ալադին, Սինբադ եւ Ալի Բաբա կերպարներին: Ամելը նաեւ աշխատել է Ռոզամունդ Պայքի մասնակցությամբ «Անձնական պատերազմ» ֆիլմի վրա:

3-ՐԴ ԵՎ ՎԵՐՋԻՆ ԵԹԵՐԱՇՐՋԱՆ

Իտալացի պրոդյուսեր Լորենցո Միելին հայտարարել է HBO-ի արտադրական «Երիտասարդ Պապը»-ը նախագծի հնարավոր 3-րդ եւ վերջին եթերաշրջանի մասին. սցենարի վրա աշխատում է սերիալի ստեղծող Պաոլո Սորենտինոն: «Պաոլոն մի գաղափար ունի, որը, հավանաբար կյանքի կկոչվի: Երրորդն ու վերջինը», - ընդգծել է Միելին Deadline-ին տված հարցազրույցի ընթացքում: Պրոդյուսերը չի նշել, թե եզրափակիչ եթերաշրջանում ով է մարմնավորելու Պապի կերպարը: Թե ով է խաղալու գլխավոր դերը եզրափակիչ սերիայում, պրոդյուսերը չի ասել: «Երիտասարդ Պապը» նախագծի պրեմիերան կայացել է 2017 թվականին՝ներկայացնելով Լենի Բելլոդոնին (Ջուդ Լոու)՝ առաջին ամերիկացին, որը դարձել է Հռոմի պապ: Դերասանը կերպարի համար առաջադրվել է «Ոսկե գլոբուս» եւ «Էմմի» մրցանակների: Երկրորդ սեզոնը, որը կոչվում է «Նոր Պապը», թողարկվել է 2020 թվականին՝Ջոն Մալկովիչի գլխավոր դերակատարմամբ:

● *Հոկտեմբերի 12-ին Գ. Սունդուկյանի անվան ազգային ակադեմիական թատրոնում տեղի կունենա «Հարսնացու հյուսիսից» ներկայացումը: Տոմսերի արժեքը՝ 1000-3000 դրամ: Սկիզբը՝ ժամը 19:00-ին:*

ԵՂԵ՛Ք ? ՏԵՂԵԿԱԾՎԱԾ

ՏՆՏԵՍԱԿԱՆ

ՀԱՐՑ. Որոնք են հողամասերի հիփոթեքի առանձնահատկությունները:

Կարեն Մինասյան (36 տարեկան)

ՊԱՏԱՍԽԱՆ. Քաղաքացիների կամ իրավաբանական անձանց սեփականության հողամասերը կարող են հանդիսանալ հիփոթեքի առարկա: Հողամասի հիփոթեքի դեպքում գրավի իրավունքը տարածվում է նաեւ այդ հողամասում գտնվող կամ կառուցվող՝ գրավատուի շենքերի եւ շինությունների վրա: Հողամասի նկատմամբ ընդհանուր սեփականության դեպքում հիփոթեք կարող է սահմանվել քաղաքացուն կամ իրավաբանական անձին պատկանող այն հողամասի նկատմամբ, որը բնեղենով առանձնացված է ընդհանուր սեփականության ներքո գտնվող հողամասից՝ որպես առանձին գույք, եւ դրա նկատմամբ իրավունքները գրանցված են գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման մասին օրենքով սահմանված կարգով, բացառությամբ բազմաբնակարան կամ ստորաբաժանված շենքի կառուցման համար սեփականության իրավունքով պատկանող հողամասերի:

ՀՀ պետական եկամուտների կոմիտե

«ԺՈՂՈՎՈՒՐԴ». Պետությանը եւ համայնքներին սեփականության իրավունքով պատկանող հողամասերը չեն կարող հիփոթեքի առարկա լինել: Հողամասերի հիփոթեքի հետ կապված իրավահարաբերությունները կարգավորվում են Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքով:

Էջը՝ ՌՈԶԱ ՊՈՂՈՍՅԱՆԻ

ՍՈՑԻԱԼԱԿԱՆ

ՀԱՐՑ. Քանի՞ ազգանվան ընտրության իրավունք ունեն ամուսնացած անձինք:

Լաուրա Նազարյան (24 տարեկան)

ՊԱՏԱՍԽԱՆ. Ամուսնանալիս ամուսինները, ըստ իրենց ցանկության, կարող են ամուսիններից մեկի ազգանունն ընտրել որպես ընդհանուր ազգանուն կամ պահպանել մինչամուսնական ազգանունը: Ամուսինների ընդհանուր ազգանունը կարող է լինել ամուսիններից մեկի ազգանունը կամ այնպիսի ազգանուն, որը ներառում է ամուսինների ազգանունները միաժամանակ: Ընդհանուր ազգանունը չի կարող լինել երկու ազգանունից ավելի: Ամուսիններից մեկի ազգանվան փոփոխությունը մյուս ամուսնու ազգանվան փոփոխություն չի առաջացնում:

Քաղաքացիական կացության ակտերի գրանցման գործակալություն

«ԺՈՂՈՎՈՒՐԴ». Ամուսնալուծվելիս ամուսիններն իրավունք ունեն պահպանելու ընդհանուր ազգանունը կամ վերականգնելու իրենց մինչամուսնական ազգանունը:

ԼՈՒՐ ԿԱԴՐ

Լուսանկարն արվել է Ստեփանակերտում

Ստեփանակերտի հուշահամալիրում բացվել է ջութակահար Բորիս Բաբայանի բրոնզաձույլ արձանը: Անվանի ջութակահարի արձանի տեղադրման վայրը պատահական չի ընտրվել. արցախցիները Բորիս Բաբայանին իր ջութակի հետ սովոր էին տեսնել հենց Ստեփանակերտի հուշահամալիրում:

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Մեր թերթը Բաժանորդագրվելու համար կարող եք դիմել

«Հայմամուլ» ՓԲԸ
հեռ. 45-82-00, 45-19-11

«Հայփոստ» ՊՓԲԸ
հեռ. 51-45-46, 51-45-47

«Բլից-Մեդիա» ՍՊԸ
հեռ 52-5301

Առաքումը՝ **ԱՆՎՃԱՐ**:

Ձեզ հետաքրքրող ցանկացած հարցով կարող եք դիմել «Ժողովուրդ» օրաթերթի խմբագրություն (**010 54-64-23** հեռախոսահամարով), եւ մենք անպայման կանդրադառնանք ձեր բարձրացրած բոլոր խնդիրներին:

ԱՌԱՋԱՐԿ
հայկական տպագիր մամուլից

«Ժողովուրդ» օրաթերթին բաժանորդագրվելու համար կարող եք լրացնել հետեւյալ բլանկը եւ ուղարկել նշված հասցեով: Ամեն օր թերթը կհասնի ձեր նախընտրելի վայր:

Բաժանորդագրության բլանկ

Անուն՝ _____
Ազգանուն՝ _____
Առաքման հասցե՝ _____
Բջջային եւ/կամ
քաղաքային հեռախոս՝ _____

Հեռ.՝(060) 490049
0023, Արշակունյաց 2, 5-րդ հարկ, 518ս.

«Ժողովուրդ» օրաթերթում հրապարակված նյութերը արտատպելիս կամ ընթացիկ մեջբերումներ անելիս պետք է պարտադիր գրառել հետեւյալ նախադասությունը. «Շարունակությունը կարող եք կարդալ «Ժողովուրդ» օրաթերթի այսօրվա համարում»:

Լրատվական գործունեություն իրականացնող՝
«Ժողովուրդ թերթի խմբագրություն» ՍՊԸ
Հասցեն՝ ք. Երեւան, Աբովյան 22ա/3, հեռ՝ **010 54-64-23**
Պետական գրանցման վկայականի համարը՝ 03Ա089086
տրված է 24.11.2010
Ստորագրված է տպագրության **11.10.2022**
Հասցեն՝ Գերարքունիքի մարզ, ք. Վարդենիս, Վ. Հակոբյանի 2/21

Գլխավոր խմբագիր՝
ՔՆԱՐ ՄԱՆՈՒԿՅԱՆ

Տպագրված է «ԳԻՆԴ» տպարան ՍՊԸ հրատարակչությունում
Խմբագրություն հանձնված նյութերը չեն գրախոսվում եւ չեն վերադարձվում, **Գ** նշանով նյութերը գովազդային հրապարակումներ են, որոնց համար խմբագրությունը պատասխանատվություն չի կրում: